ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 մարտի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եղբայր fn այս մեռեալ էր՝ եւ եկեաց,
կորուսեալ՝ եւ գտաւ»
(Ղուկ. ԺԵ. 32):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս,

Այսօր Մեծ պահքի հոգեւոր ճանապարհորդության երրորդ կիրակին է, որ անվանում ենք նաեւ Անառակի կիրակի, քանզի մեր եկեղեցիների լուսե եւ հուսառատ խորաններից հնչում է ավետարանական համանուն առակը: Ապաշխարության, աղոթքի, Ս. Գրքի ընթերցանության եւ վերանորոգության այս շրջանը հրաշալի առիթ եւ մարտահրավեր է ամենքիս՝ մեր ապրած կյանքին անդրադառնալու, սխալները տեսնելու եւ շտկելու, որպեսզի մեղքերից սրբված ու հավատքի մեջ առավել զորացած՝ կարողանանք լիարժեք եւ ամբողջական վայելել մեր հաղթանակած Աստծու՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության ուրախ ավետիսը:

Ավետարանական այս առակի իմաստն ու խորհուրդն ասես ամբողջ Ավետարանի ամփոփումն է, մի տեսակ՝ Ավետարան Ավետարանի մեջ, որի դրվագներում ամեն մեկս մեզ ենք տեսնում: Չէ՞ որ մենք նույնպես այս կյանքում հաճախ մեզ պահում ենք այս առակում հիշատակված կրտսեր կամ ավագ որդու նման, վատնում մեր ունեցվածքը, աստվածատուր շնորհներն անտեղի օգտագործում, հեռանում տնից,

ծնողներից, լավ կյանքի ակնկալիքով դեգերում աշխարհով մեկ, բայց նեղությունների եւ դժվարությունների ժամանակ վերստին հիշում հայրական տան ու ծնողների մասին։ Կամ սիրառատ հոր նման խրատում եւ դաստիարակում ենք մեր զավակներին այն հաստատ հույսով, որ նրանք պիտանի մարդիկ կդառնան ապագայում։ Ուրեմն, խրատական այս պատմությունն ապաշխարության, զղջման, ներողամտության եւ մարդուս հանդեպ Աստծու անսահման ողորմածության եւ անպայմանավոր սիրո մասին է։ Այլ խոսքով՝ առակը պատկերում է քրիստոնյաներիս կյանքը՝ անկումներով եւ վերելքներով, զանազան մեղքերին հակվածությամբ ու նրանց դեմ անտեղիտալի պայքարներով։ Ուստի պատահական չէ, որ Քրիստոսի Եկեղեցու լուսազարդ այրերից Ս. Հովհան Ոսկեբերանը դարեր առաջ շատ դիպուկ նշել է. «Եթե աշխարհի երեսից բոլոր գրքերն այրվեին, եւ անգամ Ս. Գիրքը, ու փրկվեր միայն Անառակ որդու առակը, ապա մարդկությանը բավական կլիներ լուսավորվելու եւ փրկվելու համար»։ Ուստի այսօր միասին պետք է փորձենք վերստին մտաբերել այս առակի բովանդակությունը, խորամուխ լինել նրբությունների մեջ եւ եկեղեցուց դուրս գալ մեզ համար դաս կամ դասեր քաղած։

Եւ այսպես՝ առակն Ավետարանում զետեղված է «Կորած ոչխարի» եւ «Կորած դրամի» առակներից հետո։ Նրա ունկնդիրներն են փարիսեցիները եւ դպիրները, այնտեղ ներկա են նաեւ Նրա աշակերտները եւ ժողովրդից։ Հիսուս այս առակը պատմում է մի իրավիճակում, երբ մի կողմից մաքսավորներն ու մեղավորներն են, որոնք ուզում են լսել Աստծու խոսքը, բժշկվել իրենց հոգեւոր եւ մարմնավոր արատներից, իսկ մյուս կողմից՝ փարիսեցիներն ու դպիրները, որոնք նախանձից կուրացած՝ կասկածամտությամբ հետեւում են Տիրոջ գործունեությանը։ Բոլորին զարմացրել էր Հիսուսի պահվածքը, քանզի Նա առավել ուշադիր էր անտեսվածների, արհամարհվածների եւ ընդհանրապես մեղավոր մարդկանց հանդեպ։ Հետեւաբար նրանց մտքում ժամանակ առ ժամանակ հարց էր առաջանում. ո՞վ է այս Հիսուսը, որ եկել է հեղաշրջելու այն արժեքային համակարգը, որով դարեր շարունակ ապրում է Աստծու ընտրյալ ժողովուրդը, Նա Հովսեփի եւ Մարիամի զավակը չէ՞... Մի պահ փորձեք պատկերացնել, որ հենց այս մտածումների մթնոլորտում Հիսուս կրկին հայտարարում է, որ եկել է մեղավորներին կանչելու եւ ոչ թե արդարներին։ Եւ Տերն այս առակն է պատմում նրանց, որ գուցե

կարեկցանքով լցվեն՝ բերելով իր զավակներին սիրող հոր օրինակը։ Հայրը սիրում էր ավագ որդուն, որ միշտ իր հետ էր՝ հավատարիմ՝ նույն փարիսեցիների նման։ Նա նաեւ սիրում էր կրտսեր որդուն, որն անառակ էր, մեղավոր, բարոյազուրկ, բայց, ի վերջո, կրկին հոր մոտ վերադարձած։ Հիսուս հույս ուներ, որ այս որդիների եւ հոր օրինակով փարիսեցիներն իրենք իրենց կճանաչեին, ինչպես նաեւ իրենց կողմից արհամարհվածներին, եւ վերջապես կհասկանային, որ թեեւ Աստծու առաջ բոլորն էլ մեղավոր են, բայց Աստված նաեւ սիրում է ամենքին՝ անկախ սեռից ու հասարակական պատկանելությունից։

Առակը մի ընտանիքի մասին է, որում գործող անձինք հայրն ու իր երկու զավակներն են, ոչինչ չի ասվում մոր մասին։ Կրտսեր որդու պահանջով հայրը բաժանում է ունեցվածքը որդիների միջեւ։ Ըստ Մովսիսական օրենքի՝ հարուստ մարդու մահից հետո ժառանգությունն անցնում էր որդուն, եթե որդի չուներ, ապա դստերը։ Եթե զավակներ չուներ, ապա եղբայրներին կամ այլ ազգականների։ Իսկ եթե մեկից ավելի զավակ ուներ, ապա ժառանգությունն անցնում էր ավագ որդուն։ Սա տվյալ մարդուն հնարավորություն էր տալիս նման կերպ ունեցվածքը բաժանելով՝ պահպանել այն։ Գործնական կյանքում մեկ այլ սովորույթ էլ կար. եթե մարդ երկու զավակ ուներ, ապա ավագ որդին ստանում էր ժառանգության 2/3-ը, իսկ կրտսերը՝ 1/3-ը։ Ամեն դեպքում ավագ լինելն արդեն իսկ առաջնայնություն էր ենթադրում։ Ժառանգությունը սովորաբար բաժանվում էր հոր մահից հետո, երբեմն էլ՝ կենդանության օրոք։ Սիրաքի իմաստությունը զգուշացնում էր, որ մարդ կենդանության օրոք իր ժառանգությունը չբաժաներ, այլ միայն մահից հետո կամ մահվան մահճում։

Ինչպես տեսնում ենք, հայրը չի շարժվում Հիսուսի ժամանակ ընդունված սովորությամբ եւ կրտսեր որդուն է տալիս ժառանգության նրա բաժնեմասը։ Սա հակառակ էր իսրայելացիների շրջանում ընդունված սովորույթին եւ համարվում էր թուլության նշան։ Այս առակում ժառանգության համար գործածված հունարեն երկու բառերը նշանակում են «ունեցվածք» եւ «կյանք»։ Այսինքն՝ հայրն իր կյանքը՝ տարիների ընթացքում նախնիների եւ իր կուտակած ունեցվածքն է բաժանում որդիների միջեւ։ Իսկ կրտսեր որդին իր քայլով ասես ուզում էր ասել, որ հայրն իր համար արդեն մահացել է։

Ժառանգության բաժանման այս պատմությունից, սիրելինե՛ր, զերծ չէ նաեւ մեր կյանքը։ Այսօր բազում ընտանիքներում թշնամություն եւ

անհաշտություն կա ունեցվածքի բաժանման պատճառով, երբ եղբայրը եղբոր հետ չի խոսում, երբ կռիվ է ընկել հարազատների միջեւ. այս հարցում, բնականաբար, կարեւոր է տան մեծի արդարադատ եւ իմաստուն կեցվածքը։

Ավագ որդին մնաց տանը եւ շարունակեց օգտակար լինել իր ընտանիքին, իսկ կրտսերը փողի վերածեց իր բաժին ժառանգությունը, հեռու աշխարհ գնաց, վատնեց ամեն ինչ եւ ապրում էր անառակաբարո կյանքով։ Այդ երկրում սաստիկ սով եղավ, կրտսեր որդին ստիպված դիմեց քաղաքացիներից մեկին՝ խոզեր արածեցնելու եւ նրանց կերակրով հագենալու։ Ապա խելքի եկավ, հայրական տան եւ իրենց բազում վարձու աշխատողների մասին հիշեց, սկսեց մտածել, թե ինչ պետք է ասի հորն իբրեւ արդարացում. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ եւ այլեւս արժանի չեմ որդիդ կոչվելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատավորներից մեկը» (Ղուկ. ԺԵ. 18–19)։

Այս հատվածում մարդկային կյանքի նրբությունների եւ մարդու աշխարհիկ մտածողության խտացումն է։ «Հեռու աշխարհը» դրախտից այս աշխարհն ընկնելն է խորհրդանշում, իսկ «քաղաքացիներից մեկը»՝ հորից, տնից կտրվելն ու օտարին միանալը։ Մարդ միշտ էլ ձգտում է լավ ապրել, առանց խնդիրների եւ անհոգ, իր համար դրախտային աշխարհներ, պատրանքներ է ստեղծում եւ ամեն քայլի դիմում է նպատակին հասնելու համար։ Հատկապես պատանիներն ու երիտասարդները միշտ ցանկանում են կտրվել իրենց ծնողներից, ազատ կյանքով ապրել, օգտվել կյանքի բոլոր բարիքներից եւ հաճույքներից։ Այսօր նույն ձեւով նաեւ մեր հայրենակիցներից շատերը մեր հայրենիքի անկայունության, արցախյան վերջին պատերազմում կրած պարտության եւ անորոշության, սոցիալ-տնտեսական կյանքի վատթարացման եւ անհուսության պատճառներով կրկին արտագաղթի ճանապարհն են բռնել՝ փորձելով մոռանալ անցյալը եւ նոր կյանք ստեղծել։ Բայց մեր հայրենիքը հենց այսօր գուրգուրանքի եւ սիրո կարիք ունի... գուցե հետագայում արդեն ուշ լինի։ Ուշադրությո՛ւն դարձրեք՝ կրտսեր որդին ինքնանդրադարձ կատարեց միայն այն ժամանակ, երբ զգաց, որ սովից մեռնում է, ամեն ինչ վատնել է, այլեւս ոչինչ չունի։ Եւ միանգամից աշխատեցին իրապաշտ մտածումն ու պարզ հաշվարկը. նա որոշեց վերադառնալ տուն ոչ թե հայրենի բնակավայրի, հոր կամ եղբոր կարոտից դրդված, այլ հիշեց, որ այնտեղ ինքը կուշտ էր եւ ապահով։

Եւ այստեղ կատարվում է անսպասելին առակի ունկնդիրների համար. իր զավակին տեսնելով՝ հայրը վազում է նրան ընդառաջ, վզովն ընկնում եւ համբուրում՝ չսպասելով զավակի ինքնարդարացմանը կամ գեղեցիկ խոսքերին: Քանի՜ անքուն գիշերներ էր անցկացրել, ինչքա՜ն էր մտածել նրա մասին, միայն Աստծուն էր հայտնի... Ուստի ծառաներին կարգադրում է, որ նախկին պատմուճանը եւ կոշիկները հագցնեն, մատանին դնեն մատին, պարարտ եզը մորթեն եւ ուրախությունից մի լավ քեֆ անեն, «որովհետեւ իր այս որդին մեռած էր եւ կենդանացավ, կորած էր եւ գտնվեց» (Ղուկ. ԺԵ. 24): Թվում է, թե հիմա առակը կավարտվի, ամեն ինչ ասված է եւ հասկանալի, բայց Հիսուս շարունակում է պատմությունը՝ ցույց տալով նաեւ ավագ եղբոր կերպարի սնանկությունը: Առաջին հայացքից այս «դրական» եղբայրը բարկանում է տեսածից, տրտմում եւ նեղանում հորից, անգամ նրան չի դիմում «հայր» բառով, այլ ընդվզում է՝ շեշտելով, որ այսքան տարի ծառայել է հավատարմությամբ, բայց որեւէ պատվի չի արժանացել, փորձել է պահել ընտանիքի վաստակածը եւ բազմապատկել, բայց կրկին անտեսված է եղել: Եւ այս պահին հնչում է իմաստուն հոր դիպուկ եւ ճշմարիտ պատասխանը. «Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես, եւ ամեն ինչ, ինչ իմն է, քոնն է, բայց պետք էր ուրախ լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացավ, կորած էր եւ գտնվեց» (Ղուկ. ԺԵ. 32):

Կյանքից վերցված այս պատմությունը շատ ուսուցողական է եւ խրատական, իսկ ամեն մի արտահայտությունն ունի իր բացատրությունը: Կրտսեր որդուն հագցնում են նախկին պատմուճանը, որը խորհրդանշում է նախահայր Ադամի նախամեղսական վիճակը՝ սկզբնական արդարությունը: Պատվիրանազանցության պատճառով մեր նախածնողը կորցրեց այն, որը վերականգնվում է միայն Ս. Մկրտության խորհրդով, երբ երկնավոր Հոր որդեգիրն ենք դառնում եւ Եկեղեցու անդամ: Այս քայլով հայրը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ անկախ հանգամանքներից՝ սիրում է որդուն եւ պատրաստ է նրան ընդունել: Հին աշխարհում մատանին իշխանության նշանակն էր, իսկ այստեղ խորհրդանշում է հոր սրտի սիրո միությունը որդու հետ, ինչպես օրինակ՝ փեսայինը հարսի, իսկ թեմակալ առաջնորդինը՝ իր թեմի հետ: Չպետք է մոռանալ, որ այն ժամանակ կոշիկ միայն ազատ մարդիկ էին հագնում: Այս քայլով կրտսեր որդուն են վերադարձվում ազատությունը եւ արժանապատվությունը: Իսկ եզը խորհրդանշում է մեր Տիրոջ զոհաբերությունը հանուն մարդկության փրկության:

Սիրելինե՛ր, այս առակի երկու որդիները մենք ենք այս կյանքում, իսկ հայրը՝ Աստված, որ գրկաբաց միշտ սպասում է մեր դարձին եւ մտքի փոփոխությանը՝ ապաշխարությանը։ Եթե մարմնավոր ծնողները ներում են մեր սխալները, ապա ինչքա՜ն առավել մեր երկնավոր Հայրը, որի սերն անսահման է Իր ստեղծածի հանդեպ։ Ապաշխարության եւ զղջման ճանապարհը մեզ մոտեցնում է Աստծուն, իսկ մեղքը՝ պատնեշ դառնում։ Կրտսեր որդին զղջալուց հետո վերականգնվեց որդիական արժանապատվության մեջ, իսկ առերես հավատարիմ ավագ որդին այդպես էլ չկարողացավ սիրել եւ ներել։ Եկեք մտածենք ապաշխարության, ներողամտության եւ սիրո մասին՝ միշտ հիշելով, որ «Աստծու հրեշտակների առաջ այսպես ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, որն ապաշխարում է» (Ղուկ. ԺԵ. 10)։